թիւնը տիրամօր պատիժներից մէկը: Որքան ճիշտ էր այդ կարծիքը, ես չգիտէի, բայց ես գիտէի մի բան, թեւ որպէ՛ս Ստեփանի հայրը չարաչար կերպով վարւում էր նրա հետ, որպէ՛ս նրա երեխայութեան ժամանակ, իբրեւ պատիժ, կախ էր տոել խեղճ տղային ջրի հորի մէջ, նա մնացել էր այնտեղ կէս ժամ, եւ այնուհետեւ Ստեփանի խելքը տեղը չեկաւ. նա միշտ ցնորւում էր, երբ ջուր կամ հօր էր տեսնում....: Այս ես գիտէի...

Ես շատ ուրախ էի, որ գնալով մօրս մօտ, քեռի Պետրոսի վրանը, չհանդիպեցայ վարժապետիս: Ինձ խիստ անտանելի էր միւս անգամ տեսնել այն մարդու երեսը, որը այնքան դառն ցաւերի պատճառ էր եղել ինձ:

Հասնելով մեր վրանը, գտանք պառաւ Խաթունին եւ Մարգարիտին քնած. Մարօն արթուն նստած սպասում էր ինձ:

Ես չեմ կարող նկարագրել այն ուրախութիւնը, որով Մարօն հանդիպեց իր երեխայութեան երկու ընկերուհիներին, նրանց միմեանց հետ փաթաթոելը, նրանց պարզ ու անմեղ սրտերի արտահեղութիւնը, նրանց անկեղծ շրթունքների մրմունջը բարձր է գրչի զօրութիւնից. այդ միայն պէտք է տեսնել եւ զգալ:

Հայկական աղջկայ սրտի մէջ կայ մի բան, կատարեալ հրեշտակային, որ մնում է միշտ անհասկանալի հասարակ մահկանացուների համար: Նա այնպէս մաքուր եւ սրբազան է, որպէս մի անարատ աստուածութիւն. նա արտափայլում է իր ջերմ լուսով, նա բուրում է իր անուշ հոտաւէտութեամբ, բայց նա միշտ մնում է անշօշափելի...

ԼԷ. ՔՈՒՐԴԸ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍՐԲԱՐԱՆԻ ՄԷՋ

Աստուծոյ լոյսը բացոեցաւ: Օրը կ'իւրակի էր: Առաւօտեան մայրս եկաւ մեզ մօտ, մենք բոլորս միասին գնացինք վանքը ժամ: Մեր վրանումը մնաց միայն պառաւ Խաթունը, մատաղն եփելու համար:

Ուխտաւորների բանակը գտնւում էր իր ջերմեռանդ բարեպաշտական վրդովմունքի մէջ: Ամէն տեղ երեւում էր շարժողութիւն, ամէն տեղ եփ էր գալիս բորբոքած հաւատքը, իր բոլոր աստուածային կարողութեամբ: Բազմութիւնը շտապում էր դէպի վանքը պատարագ տեսնելու եւ սուրբ տիրամօր գերեզմանը համբուրելու: Այն խառնիճաղանջ ամբոխի մէջ կարելի էր տեսնել ամէն երկրի հայեր, ամենատեսակ գլխարկներով, սկսած օսմանլոի ֆէսից, քրդի ապարօշից, մինչեւ պարսկի երկայն, մորթէ գդակները: Կանայքը նոյնպէս զանազանւում էին տեսակ-տեսակ հագուստներով. ամէն երկրի կինը ընդունել էր տիրող ազգի կանանց զգեստի ձեւերը: